ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկրլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հասմիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-106

Վեռա Բոյան
Հայաստանի պետմության թանգարան
Veraboyan777@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՏՆՎԱԾ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՄՈՂՈԼՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ*

Հիմնաբառեր. Մողոլական կայսրություն, մոհուր, ոսկե դրամ, դրամական գանձ, Հնդկաստան, Նոր Ջուղա, առևտուր:

Ներածություն

Հայաստանը դարեր շարունակ եղել է տնտեսական և քաղաքական առումով ռազմական կարևորություն ներկայացնող երկիր Արևմուտքի և Արևելքի միջև, կարևոր տարածք՝ միջազգային առևտրական գործունեության համար, որն իր արտացոլումն է գտնում Հայաստանի տարածքից հայտնաբերված դրամական գտածոների մեջ:

Հայ ժողովուրդը, օժտված լինելով որակական մի շարք հատկանիշներով, գտնվելով երկու միմյանցից խիստ տարբեր քաղաքակրթությունների միջև, իր մասնակցությունն է հանդես բերել միջազգային առևտրական հարաբերություններում: Այս գործընթացում անգնահատելի է հայ առևտրական դասի դերը հայոց պատմության, մշակույթի և տնտեսության զարգացման գործում: Հայ վաճառականները կապող օղակ են եղել եվրոպական և ասիական երկրների միջև՝ խթանելով տարբեր ժողովուրդների միջև մշակութային փոխառնչությունների զարգացումը:

Մեծ Մողոլական կայսրություն

Մեծ մողոլները Հնդկաստանի պատմության մեջ թերևս ամենահայտնի մահմեդական արքայատոհմն են: Նրանք կառավարել են Հնդկաստանում 16-րդ դարի սկզբից մինչև 18-րդ դարի կեսերը: Մեծ մողոլների կայսրությունը երեք դարերի ընթացքում կառավարում էր Հարավային Ասիայի զգալի մասը՝ ոսկու, արծաթի և պղնձի կայուն արժույթի և առատ թողարկումների վրա հիմնված տնտեսությամբ (Eaton 2019, 7 – 12):

Օգտվելով Հյուսիսային Հնդկաստանի քաղաքական անկայուն վիճակից՝ Քաբուլի կառավարիչ Բաբուրը ներխուժեց Հյուսիսային Հնդկաստան և հիմնեց Մեծ մողոլական կայսրությունը (Howarth 2023):

Մողոլներ (այս և հաջորդ ընդգծումները հեղինակինն են) անվանումը առաջացել է Հյուսիսային Հնդկաստանի և Միջին Ասիայի մուսուլմաններին հնդիկների

* Ստացվել է 01.08.2023 թ., ուղարկվել է գրախոսման 01.08.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

տված «մուղալ» անունից: Մեծ մողոլներ անվանել են 17-րդ դարի եվրոպացի ճանապարհորդները (Mike Markowist, 2020, 1):

Մեծ մողոլների (Բաբուրյան արքայատոհմի) ոսկե դրամները կոչվում են մոհուր: Այն Հնդկաստանի, Նեպալի և Աֆղանստանի ոսկե դրամի անվանումն է: Մոհուրը, որը պարսկերենից թարգմանաբար նշանակում է "կնիք", առաջին անգամ ներմուծվել է Շեր Շահ Սուրիի կողմից 1540 – 1545 թթ. (Mohur definition and meaning, Collins English Dictionary): Որոշ աղբյուրներ նշում են, որ **մոհուր** առաջինը թողարկվել է մողոլ կայսր Աքբարի կողմից մոտ 1562 թ., ուներ շատ բարձր որակ և կշռում էր մոտ 11 գ. (Фенглер, Гироу, Унгер 1982, 175): Այն սովորաբար շրջանաձև է, սակայն սկզբնական շրջանում այն հատում էին նաև քառանկյուն: Հաճախ մոհուրը, ինչպես մուսուլմանական մյուս մետաղադրամները, չի ունեցել պատկերներ, այլ միայն զարդանախշեր և արաբատառ գրություններ: Միայն Աուրանգզեբի կառավարման ժամանակից (1658 – 1707 թթ.) սկսած դրամի վրա տեսնում ենք թողարկման տարեթիվը:

17-րդ դարի վերջին մոհուրը ընդունվեց որպես Արևելահնդկական ընկերության հիմնական առևտրային արժույթ և ներկայացրեց հայտնագործությունների և առևտրի նոր դարաշրջան:

Այսպիսով, Մեծ մողոլական լայնածավալ կայսրությունը միավորել է Արևելքը և Արևմուտքը՝ հնարավոր դարձնելով առևտրի, տեխնոլոգիաների, ապրանքների և գաղափարախոսությունների տարածումը ողջ Եվրոպայում (Fisher 2016, 7 – 9), որին նպաստել է նաև հայ վաճառականությունը:

Մեծ մողոլների դրամները Հայաստանում որպես հայ-հնդկական առևտրամշակութային փոխառնչությունների արտացոլում

Հայոց պատմության խնդրահարույց հարցերի ուսումնասիրության համար կարևոր վկայություններ են պարունակում ոչ միայն հայկական և Հայաստանում հատված օտար տիրակալների դրամները, այլև հեռավոր երկրներից Հայաստան ներթափանցած դրամները, որոնք այստեղ են հասել տարբեր (ռազմական, առևտրատնտեսական) ճանապարհներով և, մասնավորապես հայ առևտրական դասի գործունեության միջոցով: Այս տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանում հայտնաբերված Հնդկաստանի Մեծ մողոլների կայսրության ոսկե և արծաթե դրամները: Դրանք շատ չեն, բայց եղած փաստերը վերլուծության և արժևորման կարիք ունեն մշակութաբանական վերլուծության տեսանկյունից:

Աշխատանքում, ի թիվս այլ գանձերի, առանձնացվել է Հայաստանի պատմության թանգարանում պահվող Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերված Մեծ մողոլների դրամներ պարունակող խառը գանձերը և առանձին հայտնաբերված դրամները:

Այս շարքում կարևոր է առանձնացնել Արմավիրի շրջանի Ֆերիկ գյուղում 1983 թ. հայտնաբերված դրամների գանձը: Այն ներառում է պարսկական 203 արծաթե (ՀՊԹ 19321/1-203) և Մեծ մողոլական կայսրության 6 ոսկե (ՀՊԹ 19322/1-6) դրամներ:

Քննվող հնդկական վեց ոսկե դրամներից երեքը պատկանում են Մեծ մողոլների կայսր **Աուրանգզեբին** (հիջ. 1069-1118 = 1658 – 1707 թթ.) և մյուս երեքը՝ **Մուհամմադ շահին** (հիջ. 1131 – 1161 = 1719 – 1748 թթ.): Որոշվել է դրամների չափագրական տվյալները, հատման տարեթիվը, դրամահատարանը:

Գանձը թվագրվում է 18-րդ դարով[1]:

Հայաստանի պատմության թանգարանում պահվող գանձերում Մեծ մողոլական կայսրության դրամներ են ներառում նաև.

- Երևանի նախկին կոլտնտեսական շենքի մոտ 1936 թ. հայտնաբերված դրամական գանձը, որն ընդգրկում է պարսկական (Սեֆյան՝ 220 (ՀՊԹ 13926/1-220) և Աֆշարյան՝ 30 (ՀՊԹ 13927/1-30)), Օսմանյան՝ 130 (ՀՊԹ 13928/1-130) և Մեծ մողոլների 15 արծաթե (ՀՊԹ 13925/1-15) դրամներ:
- Մեկ այլ դրամական գանձ է գտնվել 1935 թ. փետրվարի 23-ին Երևանի Նար-Դոսի անվան դպրոցի մոտ: Այն ներառում է պարսկական (սեֆյան), օսմանյան և Մեծ մողոլների 422 արծաթե (ՀՊԹ 12865 – 13929) դրամներ:
- Լոռու մարզի Լեռնապար գյուղում 1959 թ. գտնված պարսկական, օսմանյան և հնդկական 72 արծաթե (ՀՊԹ 17689/1-72) դրամներից կազմված գանձը:
- Հարկ է նշել նաև Արցախի Թալիշ գյուղում 1965 թ. գտնված պարսկական և Մեծ մողոլների 6 արծաթե (ՀՊԹ 17895/1-6) դրամների գանձը:

Մեծ մողոլների թողարկած առանձին արծաթե դրամներ գտնվել են.

- Երևանից (ՀՊԹ 7340)
- Սյունիքի մարզից (ՀՊԹ 12012)
- Գառնիի 1955 թ. պեղումներից (ՀՊԹ 17592/36)

Վերոհիշյալ դրամները մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն: Սակայն նույնիսկ նախնական քննությունը հնարավորություն է ընձեռում լրացնել հայ-հնդկական առևտրամշակութային փոխառնչությունների հետազոտման բացը և նորովի դիտարկել առևտրական ճանապարհների ուսումնասիրության շրջանակները: Հայտնաբերված դրամներն իրենց կազմով և համեմատաբար մեծ քանակով, ակնարկում են, որ Հայաստանի նշված տարածքները եղել են առևտրային ուղիների վրա:

17-րդ դարում հայկական առևտուրը մեծ զարգացում էր ապրում: Հայ առևտրային ցանցը տարածված էր ոչ միայն Կովկասում, այլև Եվրոպայում և Հեռավոր Արևելքում: Հայերն առևտրի մեջ իրենց լավ ճանաչված հմտությամբ կարողացան կարևոր տեղ գրավել ուշ միջնադարի առևտրային աշխարհում: Հայերի առևտրական հատկությունները, զուգորդված այլ բնորոշ հատկանիշների հետ, ինչպիսիք են համառությունը, խնայող լինելը, համերաշխությունը և աշխատասի-

---

1 **Գանձի** մասին համապարփակ տեղեկություն կարող ենք ստանալ այն ամբողջությամբ ուսումնասիրելուց հետո միայն, ներառելով նաև գանձում առկա պարսկական դրամները: Մեր խնդիրն է քննել հնդկական դրամների շրջանառությունը Հայաստանում, ուստի անդրադարձել ենք միայն Մեծ մողոլների թողարկումներին, հատկապես որ գանձում միայն դրանք են ոսկուց, այն դեպքում, երբ պարսկականները բացառապես արծաթից են:

ությունը, նրանց դարձրին գերազանց վաճառականներ (Moosvi 1998, 266 – 268)։ Մշակույթի պատմության մեջ հայտնի են մի շարք առևտրական ժողովուրդներ, որոնք իրենց ձեռքում են պահել միջազգային միջնորդ առևտուրը։ 16-րդ դարից հայերը լրացնում են դրանց շարքը՝ դառնալով ազդեցիկ առևտրական ժողովուրդներից մեկը։ Նրանք մշակութային առումով կարող էին հանգիստ և անխոչընդոտ առևտրական գործունեություն ծավալել ինչպես պարսկական և հնդկական միջավայրում (սակայն հանգամանքով, որ վարժ տիրապետում էին արևելյան մի շարք լեզուների և ծանոթ լինելով մահմեդական աշխարհի սովորույթներին), այնպես էլ եվրոպական (լինելով քրիստոնյա ժողովուրդ՝ փայլուն ճանաչում էր Արևելքը) (Moosvi 1998, 266)։ Այս հանգամանքը, անկասկած, նրանց առանձնահատուկ առավելություն էր տալիս։

Մեծ մողոլների հետ առևտրային հարաբերությունները հիմնականում կապվում են հնդկահայ համայնքի գործունեության հետ, որը ձևավորվել էր որպես «առևտրական ֆակտորիա»։ Հնդկաստանում առաջին հայ համայնքները կազմավորվել են 16-րդ դարում, որի բնակչության հիմնական մասը վաճառականներ էին։ Համայնքները կազմավորվեցին և զարգացան, երբ 16 – 18-րդ դարերում բազմաթիվ պարսկահայեր բնակություն հաստատեցին Հնդկաստանի շուրջ 20 քաղաքներում (Ագրա, Կալկաթա, Չինսուրահ, Սեիդաբադ, Սուրաթ, Բոմբեյ, Մադրաս, Մալաբար, Հայդարաբադ, Գվալիոր, Դաքա, Լահոր, Կոչին և այլն) (Moosvi 2018, 103 – 112)։ Ըստ որոշ աղբյուրների Մեծ մողոլների մայրաքաղաք Ագրան ծաղկել է նաև հայ վաճառականների գործունեության շնորհիվ։

Հնդկաստանի կյանքում առավել նշանակալի դեր են ունեցել խոշոր վաճառականները, որոնք իրականացրել են առևտուրը Իրանի, Թուրքիայի, Ռուսաստանի, Վենետիկի հետ։ Հնդկաստան թափանցած հոլանդական, անգլիական, ֆրանսիական առևտրային ընկերությունները առավելագույնս օգտվել են Հնդկաստանի հայ վաճառականների ծառայություններից։

Հայ առևտրական կենտրոնների մեջ հատկապես աչքի էր ընկնում Նոր Ջուղան, որը դարձել էր Արևելքի շուկաները Արևմուտքի հետ կապող կարևոր հանգուցակետ։ Ջուղայի վաճառականների առևտրական գործունեության սահմանները տարածվում էին Հնդկաստանից, Չինաստանից, Հեռավոր Արևելքից, Հարավարևելյան Ասիայից, Կենտրոնական ու Միջին Ասիայից մինչև Լևանտ ու Արևմտյան Եվրոպայի երկրներ։ Նրանց էր պատկանում նաև Իրանի հում մետաքսի արտահանման առաջնայնությունը դեպի Լևանտի առևտրական կենտրոնները։ Անգլիական այսպես կոչված «Մոսկովյան» ընկերության ծառայող Արթուր էգվարդսը վկայում է, որ 16-րդ դարում միայն Ջուղան Հալեպ էր արտահանում տարեկան 400 – 500 ջորու բեռ մետաքս և այնտեղից բերում էր 800 – 1000 ջորու բեռ անգլիական և վենետիկյան մահուդ։ Այդ նույն ընկերության մեկ այլ ծառայող՝ Լոուրենս Չեմպենը, վկայելով, որ Սեֆյան պետությունից մետաքսը սիրիական Հալեպ և լիբանանյան Տրիպոլի քաղաքներն էր բերվում հայերի կողմից, նշում է, որ ջուղայեցիները երբեմն այդ քաղաքներն էին բերում մինչև 1000 ջորու բեռ մետաքս։ Նման վկայություններ մենք գտնում ենք նաև 17-րդ դարի անգլիացի ուղեգիր Ջոն Քարտրայտի մոտ (Բայբուրդյան 1985, 105 – 106)։

17-րդ դարի հայկական կապիտալը, որն ունակ էր մրցակցել հզոր տերությունների տնտեսությունների հետ, անշուշտ, մեկ ակնթարթում չէր ստեղծվել, այլ ուներ որոշակի նախադրյալներ և պատմություն: Հայ վաճառականները օգտվում էին որոշ արտոնություններից, որոնք ամրագրված են մի շարք փաստաթղթերով: 1686 թ. Արևելահնդկական ընկերության հետ կնքած պայմանագրով հայ վաճառականներն անգլիական ազդեցության ոլորտում գտնվող բոլոր երկրներում ստացել են ազատ առևտուր անելու, սեփականություն ձեռք բերելու, պաշտոններ վարելու իրավունք:

Հնդիկ հեղինակ Աջայ Կամալակարանը գրում է, որ անգլիացի վաճառականները, որոնք առաջին անգամ ժամանել են Սուրատ 17-րդ դարի սկզբին, շահագրգռված են հայ վաճառականների հետ աշխատանքային հարաբերություններ հաստատելով, և 1688 թ. հունիսի 22-ին Լոնդոնում պայմանագիր է կնքվել Արևելյան հնդկական ընկերության և հայերի միջև Այս պայմանագիրը, ըստ հեղինակի, թույլ է տվել հայ վաճառականներին Ընկերության նավերով ճանապարհորդել և իրենց ապրանքները տեղափոխել Եվրոպա և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև տարբեր արտոնություններ է շնորհել նրանց (Before Armenians flourished in Bombay and Calcutta, they found a thriving home in Surat, 2023): :

«Սուրատի հայ վաճառականները վաճառում էին զարդեր, թանկարժեք քարեր, բամբակ, մետաքս և այլ ապրանքներ Բասրայից և Բանդար Աբասից առևտրական նավերին, որոնք դրանք արտահանում էին Եգիպտոս, Լևանտ, Թուրքիա, Վենետիկ և Լիվոռնո: Ի տարբերություն այլ արևմտյան ասիացիների, ովքեր Հնդկաստան էին եկել առանց ընտանիքի, օրինակ՝ արաբների, հայերը տեղափոխվել են իրենց կանանց ու երեխաների հետ», – գրում է Աջայ Կամալակարան: Հոդվածագիրը նշում է, որ Սուրատի հայ համայնքն իր զարգացման գագաթնակետին է հասել 18-րդ դարի կեսերին, երբ բնակչությունը հասել է 200 մարդու (Before Armenians flourished in Bombay and Calcutta, they found a thriving home in Surat, 2023):

Հնդկաստանի հետ առևտրային հարաբերությունները սերտ էին նաև Պարսկաստանի հետ: Նադիր Շահի նվաճողական արշավանքները (1737 թ.՝ Աֆղանստան, Հնդկաստան, 1739 թ. գրավել է Մեծ մողոլների մայրաքաղաք Նյու Դելին) փաստում է նաև նրա Հնդկաստանում հատած դրամները (ծանր քաշի ռուփիները), որոնք գտնվել են նաև Հայաստանի տարածքից: Իրենց կշռային ստանդարտով կրկնում են մոնղոլների թողարկումները, որոնց ոսկյա և արծաթյա դրամները ունեին նույն քաշը՝ 11 գ: Նադիր շահի կողմից Հնդկաստանի դրամակշռային համակարգի օգտագործումը նպատակ ուներ ինտեգրվելու Հնդկաստանի առևտրատնտեսական միջավայրի մեջ: Նադիր շահի հնդկական կշռային ստանդարտով թողարկած ռուփիների հայտնաբերումը Հայաստանի տարածքից ևս մի վկայություն է հայ-հնդկական առևտրատնտեսական կապերի:

Այսպիսով, հայ առևտրական դասը էական դեր է խաղացել համաշխարհային առևտրական գործընթացում՝ գտնվելով տարանցիկ ճանապարհների վրա: Նրանք կապող օղակ էին Պարսկաստանի առևտրաշատ քաղաքների ու Հնդկաստանի միջև: Հայ հմուտ առևտրականների ձեռքում էր հնդկական ապրանքների արտահանումը և ներմուծումը եվրոպական տարբեր երկրներ: Այս գործընթացում

մեծ է Նոր Ջուղայի հայ վաճառական դասի դերը, ովքեր էլ մեծ ներդրում ունեցան Հնդկաստանում հայկական համայնքների կազմավորման գործում:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ թափառել է ամբողջ աշխարհով: Տարբեր վայրերում նրանք ստեղծել են իրենց համայնքները և զբաղվել ազգապահպան գործունեությամբ: Ինչպես այլ երկրներում այնպես էլ Հնդկաստանում են ստեղծվել բազմաթիվ հայկական գաղթօջախներ և զբաղվել առևտրով, որը փաստում են ոչ միայն գրավոր աղբյուրները այլ նաև դրամագիտական նյութը:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ ոսկե, ինչպես նաև արծաթե դրամները հիմնականում նախատեսված էին արտաքին առևտրի համար, քանի որ քննվող ժամանակաշրջանում մեծ գումարային գործարքների համար վճարումը ավելի նպատակահարմար էր ոսկով, իսկ պղնձե դրամները ներքին շուկայի համար էին նախատեսված: Սակայն այդ ժամանակահատվածում նույնիսկ միջազգային առևտրում կարևոր դեր խաղացող երկրները, ոսկե դրամներ հատում էին միայն հատուկ առիթներով: Այս ամենի համատեքստում հարկ է փաստել Մեծ մողոլական կայսրության հարստության և հզորության մասին: Դրա հետ միասին նշենք նաև, որ Հնդկաստանը դարեր շարունակ եղել է ոսկու տարածաշրջան:

Այսպիսով, քննելով 16–18-րդ դարերի պատմական անցքերը հավելենք, որ հայ առևտրական դասի կողմից զարկ տրվեց նոր երկրներ բացահայտելուն և նշանավորվեց նաև միջազգային առևտրի և առևտրական գլխավոր մայրուղիների յուրացմամբ, որով էլ պայմանավորված է Հայաստանի դրամական շրջանառության այս պատկերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ 1985 – Բայբուրդյան Վ., Հայերը և Լևանտյան առևտուրը XVII դարում, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1985, № 2, էջ 103–117:

ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ 1985 – Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երևան, 2007:

БАЙБУРТЯН 1965 – Байбуртян В.А. Армянская колония Новой Джульфы в ирано-западноевропейских экономических и политических взаимоотношениях в XVII в., Москва, 1965.

ФЕНГЛЕР 1982 – Фенглер Х., Гироу Г., Унгер В., Словарь нумизмата, Москва, 1982.

Before Armenians flourished in Bombay and Calcutta, they found a thriving home in Surat, https://scroll.in/magazine/1018430/before-armenians-flourished-in-bombay-and-calcutta-they-found-a-thriving-home-in-surat 20.07.2023, 17:15.

EATON 2019 – Richard M., Eaton, India in the Persianate Age: 1000–1765, 2019:

FISHER 2016 – Michael Fisher, A short history of the Mughal Empire, London : I.B. Tauris, 2016.

HAIDER 1998 – Najaf Haider, International Trade in precious metals and monetary systems of Medieval India: 1200–1500 A. D, Proceedings of the Indian History Congress, 1998, Vol. 59 (1998), pp. 237–254, https://www.jstor.org/stable/44146994 17.07.23; 17:30.

MARKOWIST 2020 – Mike Markowist, Coinage of the Mughals, 2020, https://www.academia.edu/43256375/Coinage_of_the_Mughals 25.07.23; 12:00.

Mohur definition and meaning, Collins English Dictionary, https://www.collinsdictionary.com/dictionary/english/mohur 23.07.23; 20:10.

MOOSVI 1998 – Shireen Moosvi, Armenians in the trade of The Mughal Empire during the seventeenth century, Proceedings of the Indian History Congress, 1998, Vol. 59, pp. 266 – 278, https://www.jstor.org/stable/44146997 17,07,23; 15:00.

MOOSVI 2018 – Shireen Moosvi, Armenians in Asian Trade 16th and 17th Centuries, pp. 103 – 112, Les Arméniens dans le commerce Asiatique au Début de l'ère modern, Paris, 2018.

NAISMITH 2018 – Rory Naismith, Money and Coinage in the Middle Ages, Reading Medieval Sources, vol. 1, Boston, Brill, 2018.

Whitney Howarth, The Mughal Empire, https://www.khanacademy.org/humanities/whp-1750/xcabef9ed3fc7da7b:unit-1-the-world-in-1750/xcabef9ed3fc7da7b:1-3-expanding-to-a-global-scale/a/read-mughal-empire-beta 20.07.2023, 15:45:

Vera Boyan
History Museum of Armenia
Veraboyan777@gmail.com

THE COINS OF THE GREAT MOGHULS OF INDIA FOUND IN ARMENIA AND THEIR ROLE IN INTERNATIONAL TRADE

Keywords: Mughal Empire, Mohur, gold coin, hoard, India, New Julfa, trade.

An important source for studying Armenian history is not only the coins of Armenian and foreign rulers minted in Armenia, but also coins that came to Armenia from distant countries, some of which came here as a result of trade activities. From this point of view, the gold and silver coins of the Great Mughals of India found in Armenia are of great interest. There are few of them, but the existing facts need analysis and assessment.

This work examines the coins of the Great Mughals, which were found on the territory of the Republic of Armenia and stored in the History Museum of Armenia. In 1983, a hoard consisting of 203 Persian silver and 6 Indian gold coins was discovered in the village of Ferik, Armavir province. Three of the Indian coins belong to the Great Mughal Emperor Aurangzeb (1069-1118 = 1658-1707), and the remaining three belong to Muhammad Shah (1131-1161 = 1719-1748). The loss of hoard occurred in the middle of the 18th century.

Mughal gold coins are called mohurs. These coins were in circulation in India, Nepal and Afghanistan. They were first meanted by Akbar around 1562. The coin was of very high quality and weighed about 11 g. Mohur, like other Muslim coins, had no images and contained only ornaments and inscriptions. Since the time of Aurangzeb, the year of issue appears on them. The Mughal Empire ruled much of northern India and South Asia for three centuries, from the early 16th century to the mid-18th century. It had an economy based on a stable currency of gold, silver and copper.

Вера Боян
Музей истории Армении
Veraboyan777@gmail.com

МОНЕТЫ ВЕЛИКИХ МОГОЛОВ ИНДИИ, НАЙДЕННЫЕ В АРМЕНИИ, И ИХ РОЛЬ В МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛЕ

Ключевые слова: Империя Великих Моголов, Мохур, золотая монета, денежный клад, Индия, Новая Джульфа, торговля.

Важным источником для изучения армянской истории являются не только отчеканенные в Армении монеты армянских и иностранных правителей, но и монеты,

поступившие в Армению из дальних стран, часть из которых попала сюда в результате торговой деятельности. С этой точки зрения большой интерес представляют золотые и серебряные монеты Великих Моголов Индии, найденные в Армении. Их немного, но существующие факты нуждаются в анализе и оценке.

В этой работе рассматриваются хранящиеся в Музее истории Армении монеты Великих Моголов, которые были найдены на территории РА.

В 1983 году, в селе Ферик Армавирской области был обнаружен клад, состоящий из 203 персидских серебряных и 6 индийских золотых монет. Три из индийских монет принадлежат Великому Могольскому императору Аурангзебу (1069–1118 = 1658-1707 гг.), а остальные три – Мухаммад-Шаху (1131-1161 = 1719-1748 гг.). Выпадение клада произошло в середине 18-го века.

Золотые монеты Великих Моголов называются мохурами. Эти монеты были в обращении в Индии, Непале и Афганистане. Впервые они были выпущенный Акбаром около 1562 г. Монета была очень высокого качества и весила около 11 г. Мохур, как и другие мусульманские монеты, не имел изображений и содержал только орнаменты и надписи. Со времен Аурангзеба на них появляется год выпуска.

Империя Великих Моголов управляла большей частью северной Индии и Южной Азии в течение трех столетий - с начала 16-го до середины 18-го века. Она имела основанную на стабильной валюте из золота, серебра и меди экономику.

Վեռա Բոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԳՏՆՎԱԾ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԵԾ ՄՈՂՈՒԼՆԵՐԻ ԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ

Նկ. 1 - Ոսկե մոհուր, Մուհամմադ շահ (հիջ. 1131-1161 = 1719-1748 թթ.), հատման տարեթիվ՝ 7-րդ տարի (հիջ. 1137 = 1725 թ.), կշիռ՝ 10,89 գ., տրամագիծ՝ 20,5 մմ, ՀՊԹ 19322/1

Նկ. 2 - Ոսկե մոհուր, Առրանգզեբ (հիջ. 1069-1118 = 1658-1707 թթ.), Դրամահատարան՝ Առրանգաբադ, հատման տարեթիվ՝ -, կշիռ՝ 11 գ., տրամագիծ՝ 20,9 մմ, ՀՊԹ 19322/2

Նկ. 3 - Ոսկե մոհուր, Մուհամմադ շահ (հիջ. 1131-1161 = 1719-1748 թթ.), հատման տարեթիվ՝ 4-րդ տարի (հիջ. 1134 = 1722 թ.), կշիռ՝ 10,90 գ., տրամագիծ՝ 19,9 մմ, ՀՊԹ 19322/3

Նկ. 4 - Ոսկե մոհուր, Մուհամմադ շահ (հիջ. 1131-1161 = 1719-1748 թթ.), հատման տարեթիվ՝ 7-րդ տարի (հիջ. 1137 = 1725 թ.), կշիռ՝ 11 գ., տրամագիծ՝ 20 մմ, ՀՊԹ 19322/4

Նկ. 5 - Ոսկե մոհուր, Առրանգզեբ (հիջ. 1069-1118 = 1658-1707 թթ.), հատման տարեթիվ՝ հիջ. 1070-1100 = 1660-1689 թթ., դրամահատարան՝ Առրանգաբադ, կշիռ՝ 10,99 գ., տրամագիծ՝ 21 մմ, ՀՊԹ 19322/5

Նկ. 6 - Ոսկե մոհուր, Առրանգզեբ (հիջ. 1069-1118 = 1658-1707 թթ.), հատման տարեթիվ՝ 22-րդ տարի (հիջ. 1090 = 1679 թ.), կշիռ՝ 10,99 գ., տրամագիծ՝ 23 մմ, ՀՊԹ 19322/6

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ